

ԲԱԺԱՆՈՂ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 ձր.
 Վեցամսեայ 6 "

 Արևասահմանի համար
 Տարեկան 15 "

 Վեցամսեայ 8 "

 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ժր.
 Վեցամսեայ 1.50 "

 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրանացի սոցիալական
 երեսակի համար 40 սանթիմ
 և իսկ վերջին երեսակի համար
 20 սանթիմ և ևրեհեկ
 աւելի ակցաներու համար
 20 Օլոյ գեղջ կըլլայ:

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԻՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԹՐԵՐԸ

Նախկին և նորապիստ
 Խմբագրության հասցիք

—
 Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

Իրոսթիմի և չեն տրուի

Արևասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

Ս. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

Իշխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԸ ԵՐԱՇ-
 ԽԱՆՈՐԵԱՆ ԱՍՅՈՒՄ ԳԱՂԱՔԻ ՎԻՃԱ-
 ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փոփոգութիւնը կրնան
 իրեն գիտել

Զար-Պորիս փողոց Վառնա

ԱՂՔԱՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Վառնայի ազգային վարժա-
 րաններու տնօրէնը իր տեղեկա-
 գրին մէջ, որուն ամփոփումը
 արդէն անցեալ թուով հրատա-
 րակեցինք, մոռցած էր նաև
 հասարակութեան ուշադրութիւնը
 հրատարակելու մը վրայ, որ մեր
 կարծիքով ամենէն կարևորնե-
 րէն է. այն է թշուառ ու աղքատ
 աշակերտներու խնդիրը:

Սիրտ խշխշեցնող անսարան
 մըն է, արդարեւ, ուսուցչի մը
 համար, ամէն օր աչքի առջև
 ունենալ ուշիմ, աշխատող, ամբողջ
 աշակերտներ, որոնց վրայ զար-
 հուրելի չբարտրութիւնը անգթո-
 րէն իր ճանկերը բեռնած է, ո-
 րոնք ցուրտ ձմեռին, ցած, խար-
 խուռ ու գետնին հաւասար խշտիկի
 մը անկիւնը, վառած ամուխի լոյ-
 սով, անօթի փորով և ցուրտէն
 կապուացած ձեռքերով ստիպ-
 ուած են գրիչ շարժելու, գաս
 պատրաստելու, և որոնցմէ չա-
 տերն ալ, տարուան շրջանը չա-
 ւարտած՝ հարկադրուած են թու-
 ղուլ վարժարանը փողոցէ փողոց
 լուցիկի, սիկարի թուղթ կամ
 պատկերազարդ քարդեր ծախս-
 լով օրապահիկ հայթայթելու
 համար:

Աղքատ դպրոցականներու այս
 տխուր վիճակը գրեթէ ամէն
 վարժարանի մէջ գոյութիւն ունի
 Բայց ժամանակէ մը ի վեր ոչ ոք
 ուշադրութիւն կը դարձնէ այդ
 զրկուածներուն վրայ, որոնք հա-
 շատարակէս իրաւունք ունին ազ-
 գային վարժարանէն օգտուելու,
 բայց ակամայ անոր արդիւնքնե-
 րէն անբաժին կը մնան:

Ժամանակէ մը ի վեր միայն
 ըսի, որովհետեւ ես կը յիշեմ թէ,
 տղայութեանս տունն, Պուշկարի-
 օյի նախակրթարաններու մէջ,
 վարժարանին հոգաբարձութիւնը,
 ամէն տարի, ուսուցիչներուն յատ-
 կապէս աղքատ տղոց ցանկ մը
 պատրաստել կուտար և անոնց
 կը մատակարար դպրոցական պի-
 տոյք, ցերեկեայ ճաշ և տարին
 մէկ կամ երկու անգամ ալ զգեստ-
 Յետոյ, երբ տեսնուեցաւ որ այդ
 գրութիւնը շատ կը ճնշէ հոգա-
 բարձուներու պիւտճէին վրայ,
 զանազան վարժարաններու մէջ
 աղքատ աշակերտներու փոխա-
 դարձ օգնութեան ընկերութիւն-
 ներ կազմուեցան, որոնք իրենց
 հասոյթներուն շտաբով կարող
 րնկերակիցներու դպրոցական պէտ-
 քերը կը հոգային, և այս գրու-
 թիւնը աւելի օգտակար էր տղոց
 համար, քանի որ զանոնք այդ
 հասակէն իսկ կը վարժեցնէր ի-
 րենց նմանին վիճակով հետա-
 քըքրուելու և անոնց կուտար ի-
 րենց վրայ ծանրացող պարտքի
 մը գիտակցութիւնը:

Պուշկարիոյ վարժարաններուն
 մէջ ո՛չ մէկը կայ, ո՛չ միւսը.
 չբաւար աշակերտը, որքան յա-
 ջողակ ու խոստմնալից ալ ըլլայ,
 բաղդին ձգուած է, երեսը նայող
 չի կայ. ամէն օր հիւանդ է,
 գոյնը գեղնած ու նիհար, խոտե-
 լու առեն շունչը կը կտրի, և սա-
 կայն ամենէն աւելի կաշխատի
 նսրէն, չի վհատիր, մինչև որ
 ծնողքը այլևս ճարահատ կը
 քաշէ կաննէ զայն ու մէկուն քով
 ծառայութեան կուտայ, գոնէ
 բեռ մը թեթեւեղութիւն համար:

Ասիկա դատապարտելի անհո-
 ցութիւն մըն է, որուն պատաս-
 խանատուութիւնը կը ծանրանայ
 առաւելագէս ուսուցիչներուն և
 հոգաբարձուներուն վրայ. ուսու-
 ցիչներուն՝ որովհետեւ ասոնք ի-
 րենց նիւթական վիճակը և պա-
 հանջքին քրքանութիւնը սակամ
 նա առիթով հասարակութեան
 առջև բոլոր տրամադրելի ճար-
 տասանութեամբ պարզելու առեն,
 չեն շտապեր ակնարկ մըն ալ ա-
 շակերտներու նիւթական վիճա-
 կին վրայ ձգելու, որուն խնդ-

ճութիւնը սակայն ուսուցիչնե-
 րէն մոռցուելու չափ աննշմարելի
 չէ, մանաւանդ Վառնայի մէջ.
 Հոգաբարձուներուն՝ որոնք ան-
 տարբեր կը մնան իրենց խնամ-
 քին յանձնուած վարժարանը յա-
 ճախող տղոց գոնէ նիւթական
 դառն վիճակով հետաքրքրուելու
 ու միջոցներ ձեռք չեն առներ
 զայն բարւոքելու համար:

Մենք պիտի փոփոգէինք որ,
 նոր հոգաբարձութիւնը, որուն
 պակասած անդամներուն ընտ-
 րութիւնը վաղը կը կատարուի,
 ինչպէս կը լսենք, փութար
 կարգադրութիւն մը ընելու այդ
 մասին: Չենք ըսեր թէ իր
 պիւտճէն գլուխ մըն ալ ատոնց
 համար բանար, որովհետեւ իր
 պիւտճէին պայմաններուն ալ ծա-
 նօթ ենք: Բայց խորհողը միջոց
 կը գտնէ:

Վառնայի մէջ մէկէ սւելի ե-
 րիտասարդներ կան, դպրոցով հե-
 տաքըքրուող, որոնք ամէն պատ-
 րաստականութիւն ցոյց պիտի
 տան ապահովագէս, և թէ հոգա-
 բարձութեան կողմէ, այժմէն իսկ
 իրենց առաջարկուի վարժարա-
 նին աղքատ ու չբաւար տղոց
 նիւթական պէտքերը հայթայ-
 թելու համար ընկերութիւն մը
 կազմել իրենց մէջ: Ատոնց գործը
 պիտի ըլլայ տարեմուտին վար-
 ժարան այցելել, աղքատ տղոց
 ցանկը առնել, անոնց իւրաքան-
 չիւրին տուները այցելել, մօտէն
 ծանօթանալ անոնց ծնողքին նիւ-
 թական կացութեան, և, ըստ այնմ,
 իւրաքանչիւրին պէտքերը որո-
 շել ու հայթայթել:

Այն առեն աշակերտը ու-
 լելի շօշափելի կերպով ինք-
 զինքը ազգին առջև պարտական
 պիտի ճանչնայ, ուսուցիչը առիթ
 պիտի ունենայ դրական օրինակ-
 ներով աշակերտներուն հասկցնել
 փոխադարձ օգնութեան մարդ-
 կային պարտականութիւնը, զին-
 քը ազգին և ազգը իրեն կա-
 պով թանկագին կապերը, որուն
 արդիւնքն է անշուշտ իրեն տըր-
 ուած այդ գուրդուրանքը, և այս
 կնրպով պիտի կազմուին խմոր-
 ներ՝ որոնք քանի մը փարա վաս-
 ակելէ տարբեր իտեալ մը պիտի

ունենան իրենց ապրած հասարա-
 կութեան առջև:

ՇԱՂՊ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍՃՈՒԲ. 30 Յունիս

Ռուսները Պուշկարիոյ հայաշատ
 քաղաքներէն եթէ ոչ առաջինը, զէթ
 կրնանք երկրորդ քաղաքը համարել
 իր ոչ նուազ կարեւոր տեղական տոն-
 ժային առանձնայատուկ նիւտ ու
 կացովը: Սակայն դժբախտաբար շատ
 քիչ բան գրուած է անոր մասին մեր
 արտասահմանի լրագրութեան մէջ:
 Երբեքն պատահական թղթակից-
 ներ, անոնք ալ անձնական հաշիւ-
 ներէ թելագրեալ, փոխանակ մա-
 տերնին վտանգ սպառնացող վէրքին
 վրայ գնելու թղթակիցի մը ազ-
 նիւ պաշտօնի կոչուած խմբակով
 ծածկամտաբար իրենց ներքին դի-
 տուները յառաջ տանելու աշխատած
 են անասարակ:

Հոս դարձեալ ատենէ մը ի վեր է
 որ գաղթականի ու տեղացիի խնդիր
 կայ: Ուշտը ինչպէս պայտարին գէշ
 մը կը նայի, անոնք ալ այնպէս կը
 նային իրարու. որ նոր հակառակու-
 թեան կերպը նոր է հոս: Տեղացիք
 կըսեն. եկեղեցին մերն է, հետեւաբար
 անոր առաջնորդութիւնն ալ մերը:
 Դպրոցը մեր գրանցարկով չիւնուեցաւ
 կըսեն, ուստի մեր մանուկները ա-
 լելի իրաւունք ունին անկէ օգտուե-
 լու. եւ ասոր նման շատ մը ճգնիմ
 մեկնաբանութիւններ, որոնք միշտ
 ծածկուած են տղիտուութեան թանձր
 քողով մը. սակայն ո՞վ կարեւորու-
 թիւն կուտայ այս անսակ ապուշ ու
 քինախնդիր հակառակութեանց երբ
 գաղթականին համար հացի խնդիրը
 զլալի կը դառնայ:

Դեռ տարի մը առաջ հոս ճաշարան
 մը ունէինք որուն դռները բաց էին
 գրեցիկ հայ բանուորներուն առջև:
 Այնու եւ ձմեռ շարունակ ապառիկ
 կուտար անոնց, յետոյ երբ գտնան
 դռները կը բացուէին. կաշխատէին
 մարդիկը ու դիզուած պարտքերը
 վճարելով իրենց քրտնաջան աշխա-
 տութեանց պտուղէն մաս մըն ալ եր-
 կիր կը զրկէին, սակայն եկուր տես
 որ այս տարի այդ ալ չիկայ. գործ
 չիկայ, ինչ ընէ խեղճ պանդուխտ
 գաւառացին, որո՞ւ յայտնէ իր ծով
 ցաւերը այս անապաստան երկրի մէջ:
 Ամէն օր պողոտաներու վրայ փողոց-
 ներու անկիւնը գոյնգոյն կարկա-
 տաներով տափառը հագին, հալուած
 զէթին աչքերը խորը ինկած հայ
 տարագիրը, մարդասիրութեան ու
 գթութեան կարող այդ թշուառը ի
 զուր գոնէ դուռ գործ կը մուրայ:

ի գու՛ր իր ազգակից տեղացի եղբայր- ներուն կարեկցութիւնը իր վրայ կուգէ շարժել, մարդոց սրտերը քար են կտրեր: Այս ձմեռ ցրտին, բուքին, չտանք բացօթեայ անցուցին, չտանք ալ չի կրնայով ձմեռն սաստկութեան հանդուժել մեռան գացին: Եթէ այս տարի անմիջական օգնութիւն մը չի հասնի այդ խեղճերուն հետեւանքը ծանր կը լլայ եւ միանգամայն անդադ- մանելի: Անուակական ազգաստեղծում մը ունինք որ կը տեսնէ այս ամէնը ու մարմարիտի ստեղծութեամբ կանգի- սանայ: Ազգաստ մը կը մեռնի իսանի մը անկիւնը, դիմում կը լլայ ի ազգա- տախանամին որպէս զի ազգային մե- ռելակարգը եւ քահանան ձրի զր- կուին: . . . ականջի հետեւ կը նետեն: Սուտ կը խօսիք կրտսեր, մեռնողը ազ- քատ չէր, մենք գիտենք եթէ ազ- քատ է ալ նէ, դուք ձեր մէջ հան- գանակութիւն մը բացէք. քանի մը փրանք ժողովեցէք, մենք ալ բան մը կընենք:

Ձուրը եկեր ջազացքը տարեր՝ ջախ- ջախը պիտի փնտռենք հիմա: Կանց- նի բաւական տուն: Քիակը այլեւս հոտելու կը մտնեայ, կրկին դիմում կը լլայ, այն տան հազար նազով կը զրկեն պէտք եղածները ու ասանց մեռելը եկեղեցի հանդպցնելու՝ շի- սանկ գերեզմանատուն կը փոխադրեն (գերեզմանատունն իս նոյն իսկ զատ է): Աստուք ցաւ չեն պանդուխտի մը համար, հետեւ հայրենեաց օժտելն, հետեւ իր գաւազան ու ընտանիքին ողջագործումներն անյիշատակ մեռ- նիլը, ան է ցաւ . . .

Տիկնանց հոգարարութիւն մը ունէինք, որ կարճ ժամանակամի- ջոցի մը մէջ պատուաւոր զործունէ- ութիւն մը ունեցաւ ի նպատակ ման- կապարտէզին, սակայն այսօր հա- շատի ազրիւրնի կիմանանք թէ կազմալուծուեր է: Չենք գիտեր ին- չու՛. . . արքեօք մեր մէջ ամեն բարե- նպատակ ձեռնարկ իրեն համար կարճ չըլնայ մը կուենանայ: Միթէ այս ալ մտաւրի կարգը պիտի դասենք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐ ԽՂՃԱՆ, ՈՉ ԿՐ ՍՊԵՆ

IX

(Շար. նախորդ քիւնի)

Հոն հաւաքուած էին արդէն շատ մը ազգայիններ ու հայրուկներ: Վլատիքովի գրասեղանի առջեւը, քանի մը բացուած նամակներ ու «Սվոպոտա» թիւերու կոյտ մը կը կենար: Ան լուրջ ու մտահոգ էր, աս երէկ գիշերուան զէպրին ասթիւ չէր: Միւսներուն ալ դէմքերը լուրջ էին: Յայտնի կերեւոր որ արտա- կարգ խնդիր մը ամէնքն ալ կը գրա- ղեցնէր:

Նոր եկողները լուռութեամբ բարե- լեցին ու նստան:

Վլատիքովի դատնալով, ծանր, իս- ղաղ ու յուզեալ ձայնով մը հետեւ- եալը ըսաւ.

— Եղբայրներ, գործերը կարեւոր են: Այս օտար երկիրը բաւական թափառեցանք ու սոված պատեցանք: Ինչպէս որ կը տեսնուի, մեր պաշ- տելի հայրենիքին օգտակար ըլլա-

Վալով այս սեպի կրթական գոր- ծին, ան ալ հոգեվաբի մէջ է: Չար- նաչար սաստ տարի առաջ ծրագր- ուած դպրոցը վերջապէս անցած տա- րի լմնցաւ: Դպրոց մը սակայն որ- քան որ ալ գեղեցիկ ըլլայ, չի կըր- նար ո եւ է օգտակար երեւոյթ յա- ուաջ իրերի, երբ կը պակսին իրենց պաշտօնին գիտակից դաստիարակներ: Մենք այնպէս կը հաւատանք թէ կրթական գործի պաշտօնեայ մը որ հանրութեան էն օգտակար անդամ- ներէն մին է, եւ որ կոչուած է մշա- կելու մեր մտաղ սերնդին մտաու- րական ու բարոյական կեանքը, պար- տաւոր է ունենայ փորձառու կեանք եւ ազնիւ ու վեհ ձգտումներ: Ասի ճշմարտութիւն մըն է որ ամէն ազ- գերու կողմէ կընդունուի, վասն զի գործնականապէս ալ արդիւնքները տեսնուած են:

Յուսալի է մեզ տեսնել դպրոցա- կան արձակուրդներէն յետոյ նոր ուսուցչական մարմին մը աւելի ի- րենց պաշտօնին գիտակից ու աւելի արժանաւոր:

Քաղաքիս Հայ Յեզ. Դաշնակցու- թեան կօմիտէն կը պատրաստուի մօ- տերս չքեղօրէն տնտեսու «Տասնամե- եակ»ը: Երախտապարտ զգացումներով քաջալերութիւն կը մաղթեմ Հայ- րենիքի համար զոհուած հերոսնե- րուն անունը յաւերժացնող սոյն վիճ հանդէսը կազմակերպողներուն:

ՆԺԴԵԶ

Ա. Չ Դ

Կը ծախուի 1896ին վրտր. Չին իշխան Պօրթի մկրտութեան առթիւ սպառուած գործածուած նամակագրոյձ- ներ 1—5—15—25 սանդիմ:

Դիմելի՝ ՍԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վասնա

լու ժամը մօտեցած է: Պուկարիան նորէն մեղմէ պիտի օգտուի: Պէտք է անգամ մըն ալ փորձենք, թրքական բռնութիւնները անտանելի ու ան- մարդկային եղած են ալ, դուք «Սվո- պոտա»ն ամէն բան տեղեկացած էք, ազգը պատրաստ է ապստամբելու եւ իր հինգդարեան ճնշողներու ու բքու- նաւորներու շղթաները կտորելու: Միայն մեր եղբայրական ձեռք կառ- կարելը անհրաժեշտ է, Այնպէ՛ս չէ:

— Պէտք է օգնել, ըսաւ Հաճին:

— Պարտաւոր ենք, յարեց Բօրչէ- թօն:

— Պատերազմ բռնաւորներուն դէմ, ազազակեց, գեւորուած Մաքէտօնս- քին:

Վլատիքովի դուրսը հաստատարար շարժելով, նորէն շարունակեց.

— Պուրբէշի մէջ մերիները որո- չեր են, որ յարմար ժամանակ է Սերպիա խուճր գրկելու այնտեղէն ալ մեր սիրելի հայրենիքը անցնելու: Այս գործին համար յատուկ մարդ ալ եկաւ, եւ մեր աջակցութիւնը կը պահանջեն: Համաձայն էք:

— Ամէնքս ալ, ամէնքս ալ:

— Այո՛, Դեռ հիմակուրէն պէտք է մեր բոլոր հայրուկ եղբայրները կան- չուին, որոնք քաղաքը կամ շրջա- կանները ցրուած կը գտնուին, պար- տիզպանները, գործաւորները եւ ու- թիշները, ու սովնուն ալ հասկցուի որ պատրաստ ըլլան: Բայց անհրա-

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Պատմութիւն Հայոց, հեղինակ Հ. Համազասպ Թերթիմանեան, Վե- նետիկ — Բնաշխարհիկ բառարան, Գ. պրակ, գործ Հ. Եփրեկեանի, Վե- նետիկ: Մաքսիսական քուն hypno- tisme, Հ. Ս. Սարեանի, Վենետիկ:

(Շար. նախորդ քիւնի եւ վերջ)

«Բնաշխարհիկ բառարանի» Գ. րգ գիրքը հրատարակուած է. գեղեցիկ կողքի մը վրայ, որ կը ներկայացնէ հայկական հին քան- զակագործութեան նմանութիւն մը, մէջտեղը ունենալով աւե- րակներու մէջ սգակիր Մայր Հա- յաստանը. ճիշդ վերը յիշուած պատկերին նման, բայց աւելի մեծ, ամբողջ գրքին երեսը ծածկելու չափ: Գ. րգ պրակը կը սկսի Արտաշատ քաղաքին շա- րունակութենէն եւ կը հասնի մինչեւ «Գեղարդունիք»ի մէկ մասը, 160 էջերով:

Արգէն շատ գրուեցաւ Միւի- թարեան հայերուն այս հոյակապ երկարասիրութեան վրայ, իր բնաշխարհիկ գիրքով ու կեանք- քով հետաքրքրուող, անոր անց- քերուն, յիշատակներուն անու- շիկ պատկերը միշտ մեր երեւա- կայութեան առջեւ վառ պահող այդ աննման գիրքը, ամէն հայու համար անրաժանելի ընկեր մը պէտք է ըլլայ: Ի՞նչ անսգիւտ հրապոյր մը եւ անփոխարինելի միւլթարութիւն մը կայ, մեզի, օտարութեան մէջ հալուող հա- յերուս համար, «Բնաշխարհիկ բառարանի» ընթերցումին մէջ:

Ինչո՞քով պատրաստուած նկար- ները մեր աչքին առջեւ կը պատ- կերացնեն ընաշխարհի վայրերն ու հնու թիւնները, պարզ լեզուով գրուած նկարագրութիւնները կուգան աւելի ոգեւորել մեր յուզեալ երեւակայութիւնը եւ պատմական դէպքերու յիշատա- կութիւնը կը վառէ մեր սիրտը ու անպատու սէր մը կը ներ- չնչէ դէպի բնաշխարհի վայրերը: Կապ մըն է, թանկագին, միշտ նոր ու ուժեղ կապ մը, այս գիրք- քը, մեր հայրենիքի մէջ:

Պէտք է գիտնանք քաջալերել այն տեսակ գործերը ո՞նոնք ար- ժանի են հանրային քաջալերու- թեան: Ամէն հայ պարտաւոր է իր սեղանին վրայ ունենալ «Բնաշխարհիկ բառարանի» հա- տորները եւ մեր ընդ մեր լի զբաղիլ անով: Որքան լաւ տեղ- եակ ըլլայ մարդ իր հայրենիքի անցքերուն, այնքան շատ ու ան- կեղծօրէն կը սիրէ դայն:

«Մաքսիսական քուն» կամ «Գի- նօգիլմ» գիրքը, գործ Հ. Սար- եանի, գիտակցան նորութիւն մըն է մեզի համար: Հ. Սարեան ու- զած է հատորիկի մը մէջ մեր հասարակութեան ծանօթացնել արգի գիտական աշխարհը ամե- նէն աւելի զբաղեցնող եւ բարո- յական աշխարհը հիմքէն յե- ղաշրջելու սպաննացող գիտա- կան այս հարցին հետ: Հ. Սար- եան շատ գմուտար գործի մը ձեռ- նարկած է, ընտրելով գիտական անանկ ճիւղ մը, որ դեռ նոր մշակուելու վրայ կը գտնուի:

մանրամասն տեղեկութիւնները ու պայթուցիկ ժամը, նշանակելի կէտերը, որոնք կարեւոր են ու հազար տեսակ հարցերը մտքին մէջը ամփոփէ: Բայց այս տեսակ կարեւոր ու արտակարգ պատգամաւորութեան յոնգուզն ու վարպետ մէկը ըլլալու է. որ կարո- ղանայ Ռուսոնքի մէջ անոր հան- դիպիլ ու վերագառնայ սուսանց թուր- քերէն իմացուելու:

Ինչպէս գիտեք, ամէն մէկ հարիւր քայլին պահանջներ կան, որոնք կը հակեն: Պուրբէշի մէջ հիմակուհի մայ սոյգ տեսակ մարդ չը կայ եղբր, որով- հետեւ աւելի յաջողակները ուրիշ պաշտօններով տարբեր տեղեր ուղար- կուած են եղբր: Հիմակ Դանտը ստուած է, մակոյկի պէտք չը կայ, կարելի է սուսանակուն արկէն ոտքով երթալ թուրքիա, գիշեր ատեն, Բայց էն կարեւոր կէտը մարդ գտնալն է. . . որովհետեւ սուսանց պէտք եղած հրա- հանգները սուսանակուն (կէսգիւն) ստանալու մութի մէջ պիտի ստիպ- ուինք գործել:

— Այդ պուրբէշի հայրենասէր- ները այս տեսակ գործի մը մարդ ալ չունին եղբր: Ամօ՞թ, միմրաց հայ- դուկ մը:

— Կարելի է որ չունին, պատաս- խանեց ուրիշ մը:

— Ունին, բայց մէկն ալ չուզեր գլուխը փորձանքի ենթարկելու: Ի՞նչ խնայի են, աւելցուց երրորդ հայրուկ մը:

(*) Պատգամաւոր պուկար յեղա- փոխութեան մէջ օրինակելի զոհարե- րութեամբ նշանակելի դեր խաղա- ցած է. մօտերս վախճանած, սուս- ճուքցի անուանի հայրենասիրուհին՝ միակ կնոջական տիպարն է, որով պուկար յեղափոխութիւնը կրնայ պարծենալ:

ՌՈՒՍԻԱ ԵՆ ՊՈՒԼԿԱՐԻՍ

և որուն վրայ հազարաւոր զեր ու գէմ կարծիքներ յայտնուած են ու ամէն օր նորեր երեւան կուգան: Մխիթարեան հայրը սակայն աշխատած է խնդիրը յստակել լոկ «Ինքնօգիւղմի վրայ մասնաւորելով իր խօսքը, իսկ բուն մանեղիքի մը, հոգեւտեալ թիւնը, ծածկատեալ թիւն կը խոստանայ ուրիշ հասարակ մը պարզել, եթէ ներկայ գիրքը ընդունելու թիւն գտնէ: Կը կարծենք որ յարգելի հայրը սակայն մեծ յաջողութիւն կը գտնէր, եթէ լեզուին մաքրութեան հոգ տարած ըլլար: Ասանկ զժուար նիւթի մը մէջ, երբ գրաբարի կնճառութիւններ ալ կը մտնեն, գիրքը աւելի զժուարամարսի կը ըլլայ ժողովրդին համար:

Իրերը երկու գլխաւոր բաժանումունի առաջին մասին մէջ կը բացատրէ թէ ի՞նչ է մաքնիսական քունը և ի՞նչպէս կարելի է զայն առաջ բերել: Երկրորդ մասին մէջ մաքնիսական քունին բարոյական արժէքին վրայ կը խօսի, մէջ կը բերէ մաքնիսական քունի հակառակորդներուն կարծիքը, որով զայն «միասակար» «անբարոյական» և «սատանայական» կը նկատեն. յետոյ անոնց հերքումները կուտայ ընդարձակորէն: Հայր Սարեան ընթերցողին կը թողու այդ երկու հակառակ կարծիքներուն մէջ ընտրութիւն ընել, ինքզինքնաշնորհով իր կողմէն ու է կարծիք յայտնելու:

ՇԱՂԱՊ

— Ընկերներ, հոս քննադատելու տեղը չէ: Ունին, չունին չեմ գիտեր, բայց մեզի կը հարցուն որ չունին, Սա իրաւ է որ, այս ձեռնարկը վերին աստիճանի վասնդաւոր է, եւ ով ու ընտրուի, ինչպէս որ քիչ մը առաջ ներխուժող ըստէ, պէտք է գլուխը տօպրակի մէջ գնէ, բայց մենկ ով իր կեանքը կը խնայէ այս տեսակ ուրբ գործերուն համար, թո՛ղ անոնց ցուցնենք, թէ պրակցի քաջերն ալ վասնդէն չեն վախար, երբ խնդիրը ազգային գասին կը վերաբերի. եւ հաւատացած եմ որ մենկ իւրաքանչիւրը սիրով յանձն կառնէ երթալու:

Ամէնքն ալ կը լռէին:
Վլատիքով կարգաւ աչքերը պարտացուց ամէնուն վրայ ալ, յուսալով որ խօսք ուզող կը ըլլայ:
Բայց մէկն ալ այդ տեսակ փափաք չի յայտնեց:
— Եթէ ձեր մէջէն մէկը առաջարկիս գէմ է, կա՛մ կուզէ ուրիշ առաջարկութիւն մը ընել, թող խօսի:
— Չէ, չէ հակառակող չը կայ... պէտք է, պէտք է պոռացին քանի մը հոգի մէկէն:
Գարձեալ լուսութիւն տիրեց:
Վլատիքով մեքենայարար Սվոպոտաի մէկ երեսը բռնեց, եւ սկսաւ մաքրով բան մը կարգալու:
Հաւանորէն անոնց ժամանակ կու-

Ֆրանսական «Թան» լրագիրը Մ. Ի. Ալեքս. Միխայիլովիչի վառնա և Պուրկայ այցելութեան առթիւ կարգ մը խորհրդածութիւններ ըրած է, զորս աւելորդ չենք նկատեր հոս ամփոփել:

Այդ այցելութիւնը մասնաւորապէս մեծ անհանգստութիւն պատճառած է Վլէննի գահաձիւն, ուր կը վախնան թէ Պալքանեան ցամաքակցիին վրայ Աւստրո-Հունդարական ազդեցութեան նոր հարուած մը պիտի արուի, և նոր օգակ մը պիտի գարնուի այն շղթային՝ որ ձարերու կայսրութիւնը Դանուբեան բարձրավանդակի սլավական պետութեանց հետ կը կապէ:

Այն բոլոր հանդիսաւոր արարողութիւնները որոնք կատարուեցան մեծ իշխանին այցելութեան առթիւ, պարապը չէին: Ատոնք նպատակ չունէին լոկ սիրաւ հրճուեցնելու Ֆէրտինանտ իշխանին՝ որուն բուն ճաշակը գէպի ձեւակերպութիւնները և իր հանդիսաւոր սնտիքները մինչեւ այսօր չեն կրցած գոհացում գտնել Դանուբի գիւղացիներուն մէջ, այն բարբարոս գաւառներուն մէջ ուր վտարանդին Հովիտիոս իր աքսորը կողբար:

Անոնց նպատակը Պուրկարիոյ, Պալքանեան ժողովուրդներուն և առհասարակ ամբողջ Եւրոպային երեւակայութիւնը գրգռել էր, մեծազոր ցուցնել աշխարհի թէ ազատարար կայսեր սուր յաղթանակներովը ստեղծուած պետութիւնը կրկին

տար, որ իրարու մէջ խօսակցին եւ Լէվաքիին պատգամաւոր զրկելու ընտրեն մէկը:

Մէկ քանիները մեղմիկ կը փոփոսային, բայց մէկն ալ բերանը չի բացաւ բան մը ըսելու:

Այս գրութիւնը թէ ժողովին եւ նախագահին դժնոգակ էր: Ո՞վ կրնար յանդգնիլ իր ընկերոջը առաջարկելու «գնա՛» գո՛ւն մեռիք»: Որովհետեւ ամէնքն ալ կը մտնէին թէ որչափ անհրաժեշտ էր Լէվաքիին պատգամաւոր զրկելը, այնչափ վտանգաւոր էր Դանուբէն անցնելը: Դետեղերքի թուրք պահնորդներու գնդակներէն ու Ռուս-ձուգի կախաղանէն ազատուելու յոյսը շատ քիչ էր:

Գանի մը վայրկեան անցած էր, որոնք ժամերու չափ երեւցան: Այն ատեն Վլատիքով, առանց ձայն հանելու, լրագիրը գրասեղանի վրայ գրաւ, գոյնը նստած, ոտքը ելաւ եւ ցած ձայնով մը սա կարճ ձուր արտասանեց:

— Ընկերներ, ես կերթամ:
Ու նստեցաւ:
Ուր խրտուժ մը ելաւ:
— Չենք ընդունիր, քանի մը ձայներ լսուեցան:
— Չըլլար, Վլատիքով պէտք չէ երթա՛յ, ձայն տուին ուրիշները:
Յանկարծ իրարանցում մը տիրեց:
Հայդուկները սկսան իրարու մէջ խօ-

տիրացած է պաշտպան ձարին բարեացակամ շնորհքներուն:

Ինչ դատաստան որ տալու ըլլայ պատմութիւնը Ֆէրտինանտ իշխանին քաղաքական ֆօնին և իր գործածած միջոցներուն բարոյական արժէքին վրայ, երբեք չէ կարելի ուրանալ թէ՛ հազուագիւտ յատկութիւններ, շատ բուն ու շատ նուրբ զգացողութիւն մը կարելիին համար, գաղափարի ոչ այնքան հետամուտ իրապաշտութիւն մը, գիտաւորութեանց մէջ յարատեւութիւն մը և անբաղդատելի վարուողութեան ոգի մը կը կրէր այս անձը որ կարողացաւ խուսափիլ զինքը պաշտող բոլոր վտանգներէն:

Ներքնապէս իշխան Ֆէրտինանտ, որ Ստամպուլօֆի ուժովէն ազատեցաւ, չի վարանեցաւ իր սերունդին շարունակութիւնը գնել իր ո՞րդին ու ժառանգը մեծցնելով կրօնքի մը մէջ որ իրը չէր:

Երկրէն գուրս, առանց իր գերիշխան պետին հետաւորելու, գիտցաւ շահիլ Չարին բարեացակամութիւնը, որուն համար, սակայն, զժուարութեանց տուկալ հարկ եղաւ: Երկար ժամանակ՝ Սաքսոնիոյ տան գահաժառանգը՝ վիշտն ունէր իբր անկարելոր տարր մը նկատուած ըլլալուն Բոմանօֆէ մը, որ իր բոլոր համակրութիւնը Մոնթէնէկքօի փոքրիկ իշխանապետութեան վերապահած էր: Խոհեմ միջոցներու շնորհիւ, Հիւսիսի ստուերը հաւեցան և Մ. Ի. Ալեքս. Միխայիլովիչի այցելութիւնը ստոյգ վկայութիւն մըն էր նիքոլա ձաւրին գոհունակութեան:

Օրագրողները, որոնց մտացածին վարկածներուն պէտք է ծայրայեղ վերապահութեամբ հաւատ ընծայել, կըսեն թէ մեծ դուքսին այցելութեան առթիւ պուլկարո-ուսական համաձայնութեան մը կնքումը պիտի ստորագրուի:

Այս գաշնագիրը, յարձակողական և պաշտպանողական զինակցութեան մը ձեւին տակ, պիտի հաստատէ Ռուսիոյ պաշտպանութիւնը, որ պայմանագրութեամբ վառնայի և Պուրկազի նաւահանգիստները պիտի ստանայ: Ասոր փոխարէն Ֆէրտինանտ իշխանը վերջապէս իր իրենքուն պակուիլը պիտի տնտէ թագաւորի տիտղոսն ընդունելով, որով իր գրկից մրցակիցներուն, Ռուստիոյ և Սերպիոյ, պիտի հաւասարի:

Եւ բացի ասոնցմէ, իշխանը որ որթօտօքս զաւակ մը ունի, պէտք ունի նաեւ որթօտօքս կընկան մը: Ու ահա կը պատրաստուին Պուլկարիոյ թագուհիի գահը աւլ Մօնթէնէկքօի Քէնիա իշխանուհիին, որ Երբեմն աւելի բարձր գահի մը պատրաստուած էր:

Եւ սակայն ասոնք օրագրողի երեւակայութիւն են: Ռուսիա Պուրկազը կամ վառնան վարձելու ոչ մէկ պէտք ունի: Ատով դիւանագիտական ցոյցեր ըրած պիտի ըլլայ, և ատկէ ոչինչ պիտի շահի: Արդէն տէր ըլլալով Սեւ Ծովին, Ռուսիա գիտէ որ, պատերազմի ատեն, նշան մը միայն կը բաւէ այդ նաւահանգիստներուն տիրանալու համար:

սիլ բորբոքած, աչքերը փայլեցան, զէմքերը վառուեցան եւ ձեռքերը կը շարժէին, յուզման այն ապնայապալի վայրկեաններէն էր ուր, է՛ն հսկայ որոշում երբ կը ծնին:

Վլատիքով նորէն խօսք ստաւ:

— Եղբայրներ, ես յանձն կառնեմ երթալ, կը համաձայնե՞ք: Այդ բարձր պատուին ինձի արժանի կը գրտնա՞ք:

— Ոչ, ոչ, հայրենիքի համար ամէնքն ալ արժանի են մեռնելու:

— Վիճակ նետենք, գոչեց մէկը: Իսկայն քանի մը ձայներ նոյնը կրկնեցին:

— Վիճակ, վիճակ, այո, վիճակ նետենք:

— Ընդունուած է:

Ուրտուժը կաւելնար: Ամէնքն ալ այս որոշումին վրայ շունչ առին:

Նորէն խոր լուսութիւն տիրեց:

— Պարոններ, ըսաւ Պրըքով, երկու ձեռքը խաչածեւ բռնելով եւ վար նայելով, (եթէ դրօշակապետը կենդանի ըլլար, Պրըքովի այս կեցուածքին պիտի լար) ամէնքս ալ մեր սիրելի հայրենիքի ազատութեան համար մեռնելու պատրաստ ենք: Պուրկարիա դեռ իր քաջ գաւազներովը կրնայ հպարտանալ: Ոչ ոք հայդուկի փառաւոր անունը չը պիտի ստորնացնէ... ոչ ոք:

— Ճշմարիտ է, ճշմարիտ է, զայն

կտրեց ձայն մը: Ռուսցիքը լռելու նշան ըրաւ: Պրըքովի երեսի յանկարծակի խոփութենէն շուարած մնալով:

Պրըքովը շարունակեց:

— Ճիշդ է որ, ո՞վ Ռուստուկ երթալ յանձն առնէ, վիշապի մը բերանը կերթայ, իր մահը կը փնտռէ: Բայց այն կոսիներուն մէջ զոր պիտի ունենան—սար Սատուած որ ունենայինք—կը կարծէք թէ մահ չը կայ: Ըսել է աւելի նուա՞ղ վտանգաւոր են արձակ կուռի մը մէջ բռնաւորի գնդակները, քան թէ զիչերը Դանուբի ափերը:

— Ճիշդ է, ամէն տեղ մեզի մահ կը սպասէ, շատ իրաւունք ունի Պրըքով:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԱՆՆ

(Շարունակելի)

Գալով մնացածին՝ ապրողը պիտի տեսնէ, ինչպէս կրնէ ֆրանսական առածը: Անկարելի բան մը չէ որ ֆէրտինանտ իշխանը Օպրէնովիչներէն և Ռուսներու Հոհէնցօլէրներէն ետքը, փափագ զգայ թագաւոր հռչակուելու:

Այսօր իրականութիւն է թէ՛ Ռուսիա Պուլկարիոյ իշխանին հնազանդութիւնը լոկ անձնասիրական գոհունակութիւններով չի վարձատրեց: Հակառակ իր շատ նեղ քսակին, ձարը պատշաճօրէն նախախնամութեան դերը կատարեց Պուլկարիոյ օգնութեան դալով:

Ահա իր բացը Սօֆիա գուռը ափ առած էր ու զգուելի սընանկութիւնը կը սպասէր հոն: Կը կարծուէր որ յուլիս 14ի քուբօնները չի պիտի վճարուին, բայց ուս կայս. պանքան 6—8 միլիոն ֆր.ի կանխավճար մը ըրաւ և խոստացաւ միջամտել ֆրանսական դրամաւէրերուն քով՝ 80 միլիոնի փոխառութեան մը համար, որ Պուլկարիան պիտի ազատէ իր բոլոր հոգերէն:

Ահաուսիկ իրական ծառայութիւնները: Եւ այս հնչուն ու աներեւակայելի փաստերուն առջև՝ Աւստրիա զինվածափ կը զգայ ինքզինքը: Անիկա անշօք, անհանգիստ ու զայրագին՝ հանդիսատես կըլլայ Պալքանեան ցամաքակղզիին մէջ այնքան քրտինքով հաստատուած հաւասարակըշուութեան քայքայումին և ուսական ազդեցութեան յաղթական տիրապետումին:

ԱԶԳԱՅԻՆ ԲՈՐՈՆԻԿ

Բաղադրիս Ս. Սարգիս եկեղեցւոյ Դպրաց դասուն հաստատման Գ. տարեշրջանը յառաջիկայ կիւրակի լրանալուն առթիւ, յիշեալ ընկերութեան բոլոր անդամները հրաւիրուած են եկեղեցի հանդիսաւոր արարողութիւն կատարելու:

— Ճիշդեճեան վարժարանի տնօրէնութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ յիշեալ վարժարանին ամսավերջի հարցաքննութիւնները պիտի սկսին վաղը յուլիս 8ին և պիտի տեսնեն մինչեւ յուլիս 14 շաբաթ:

— Մեզի կը գրեն թէ յուլիս 3ին ձուրձօվայի առջեւ լողալու ատեն խեղդուեր է ակնցի Գրիգոր Խաչատուրեան անուն երիտասարդ մը, որ Պապատաղէն նոր եկած էր: Խեղճ զոհին գիւրկը հազիւ երեք օր ետքը երեւան կելլէ, և կը թաղուի ուսմէն քահանայի մը ձեռքով և ուսմանական եկեղեցւոյ արարողութեամբ:

— Վառնայի Ազգ. վարժարանաց ուսուցչական մարմինը կը խնդրէ մենէ շնորհակալութիւն

յայտնել Մանգրալի սրահին տնօրէն Տ. Թիւֆէնկեանի, որ բարեհաճած էր ձրիաբար վարժարանին տրամադրութեան տակ գնել իր սրահը, տարեկան հանդէսին առթիւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ն

Անձրեւները և կարկուտները որոնք վերջին շաբաթները անդադար տեղացին Պուլկարիոյ զանազան կողմերը, մեծամեծ աւերումներ գործեցին այլեւայլ մասերու մէջ, Վառնայի, Կէպէճէի, Բրօվատայի Թրնօվօի և Բլէվէնի շուրջը, ինչպէս նաեւ Խաքէրի հովիտին վրայ, Գորիլօի մօտերը, ցորենի դաշտերը բոլորովին սուրուեցին: Եւ ուսկայն այդ անձրեւները մեծապէս նպաստեցին եգիպտացորենի հունձքերուն, որոնք այս տարի շատ առատ և ընտիր պիտի ըլլան:

— Կառավարութիւնը ինչպէս ամէն սուրի այս տարի ալ անձրեւներէ և կարկուտէ փաստած հոգադորձներուն հատուցում ընելու համար, 1,400,000 ֆր.ի գումար մը յատկացուցած է: Սակայն ինկատի ունենալով եղած վնասներու մեծութիւնը, հազիւ անոնց 10 0/0 միայն կարելի պիտի ըլլայ վարձատրել:

— Սօպրանիէն իր վերջին արտակարգ նստերուն մէջ, հետեւեալ օրէնքները քուէարկած է, 1. Անցեալ տարուան երկրագործական յանցանքներուն ներում, 2. Ձեռնմ մամուլի օրէնքին, 3. Օրէնք կալուածական տուրքի մասին, 4. փոփոխութիւն հարկահաւաքներու օրէնքին, 5. հաստատում 1901 տարուան անշարժ կալուածոց տուրքին, 6 իշխանութեան նահանգներուն վարչական բաժանումը, 7. փոփոխութիւն դրոշմաթուղթի օրէնքին, 8. փոփոխութիւն թղթատարական օրէնքին, 9. հաստատում քննութեան ելեւմուտքի, 10 յաւելուածական վարկեր, 11. փոփոխութիւն աւազակութեան օրէնքին, 12. օրէնք գարոցական տուրքերու մասին, 13. գարոցներու քըննական հսկողութիւն, 14. Մէկ միլիոն ֆրանքի մանրուք դրամներ կարուելու որոշում, 15. գիւղացիներու միջեւ հոկտ. 15 մօրտթօրիում:

— Անցեալ ուրբաթ, պուլկար ազատական կուսակցութեան տարեդարձն ըլլալով, Սօֆիայի մէջ մեծ խնձոյք մը տրուեց և որուն մասնակցեցին բն կուսակցութեան բոլոր երեւելի անդամները, ճաշի ատեն զանազան կենացներ պարպուեցին, Տօթթ. Բատուլավօֆի, Վուլչէվի և Վաչէվի կողմէ: Կուսակցութեան օսկանը

«Նարոտնի Բրավա» այդ առթիւ ընդարձակ յօդուածով մը պարզած էր այն բոլոր կարեւոր ծառայութիւնները զորս յիշեալ կուսակցութիւնը մատուցած է երկրին: Ի մէջ այլոց, կը յիշէ 1881ին սահմանադրութեան վերահաստատումը, որ ընդհատուած էր պահպանողականներու ձեռքով: 1885ին Արեւելեան Բուսնէլի միացումը: 10 տարուան պայքար մը Սթամպուլօֆի բռնապետութեան դէմ: Եւ յիշեց կը յայտնէ թէ երկրին քաղաքական և դրամական տագնապալից վիճակը թոյլ չեն տուած նախկին ազատական նախարարներուն իրենց բոլոր ծրագիրը իրագործել: Յետոյ, ակնարկելով նախկին նախարարներու գատավարութեան խնդիրը, յոյս կը յայտնէ թէ ազատ կուսակցութիւնը անարատ պիտի մնայ այն փորձանքներէն, որոնց ենթարկել կուզեն իր քաղաքական հակառակորդները:

— Նիքօլա ձարը Նիքօլա վանքին համար նուիրած է 12 խոշոր զանգակներ, որոնք միասին 1236 բուլ կը կշռեն: Այս զանգակներէն իւրաքանչիւրին վրայ նուիրատու կայսեր անունը արձանագրուած է:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լօրտ Գիչնէր կը հեռագրէ թէ յուլիս 11ին Պրասփուտ անգլ. զօրավարը յանկարծակի բերեր է պօէր զօրախումբ մը և 29 հոգի գերի բռներ, որոնց 2ը զօրավար 1ը հրամանատար և զօրավար Շթէյնի եղբայրն է եղբր, ինչպէս նաեւ պօէր կառավարութեան քարտուղարը, և ժողովի քարտուղարը: Կը կարծուի թէ Տրվէթեւս անոնց մէջ ըլլալու է:

— Քարի մէջ դրուելունը չէ փոխուած: Անգլ. կառավարութիւնը համոզուած է թէ կախազանը իր ազդեցութիւնը պիտի ունենայ և ապստամբութեան տարածուելուն առաջը պիտի առնէ:

Անգլ. կառավարութիւնը այս միջոցիս կուսուսմասիւրէ ծրագիր մը, որով անգլ. ուժերը պիտի կեդրոնացուն նախալ Տիւրպան գծին վրայ, Փիթէրսպուրկի, Եօհանէսպուրկի և Բրէթօրիաի մէջ: Այսպէսով կարելի պիտի ըլլայ հանգերու ոսկին աւելի դիւրութեամբ ու աւելի կարճ ճամբով փոխադրել:

Ի Տ Ա Լ Ի Ա

Յառաջիկայ յուլիս 29ին արտակարգ շքեղութեամբ պիտի տօնուի Հումպէրթօ կայսեր մահուան առաջին տարեդարձը: Ազգային կատարեալ ուխտագնացութիւն մըն է որ կը կազմակերպուի դէպի Պանթէօն, Երկրին

բոլոր նահանգները պիտի մասնակցին: Ջանազան կրօնական փառայեղ հանգեսներ պիտի կատարուին այդ առթիւ կառավարութեան և արքունի ծախքերով: Սովուաի տան բոլոր անդամները ներկայ պիտի ըլլան հանդէսներուն:

Նկատելով որ ընկերվարականները զարմանալի աճում կունենան, դիտմամբ միապետութեան շեշտուած գոյն մը պիտի տան ուխտագնացութեան:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ա

Փրանց-ժօզէֆ կայսրը Սալցպուրկ գացեր է, ներկայ գլուխուելու համար Էլիզապէթ կայսրուհուն ի յիշատակ կանգնուած արձանին բացման: Կայսրը շնորհակալութիւն յայտնեց է ժողովուրդին ազգասիրական ու հաւատարմական զգացումներուն համար: Կայսրը փառաւոր մուտք մը ունեցեր է քաղաքին մէջ, թնդանօթներու սրտին և հսկայ ամբօխի մը խանդավառ «հռչարաններուն ընկերակցութեամբ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Փէքինի մէջ կը պատրաստուին կայսեր մուտքը ընդունելու: Մասերու ճիւղերով կը ծածկեն կայսեր անցնելիք ճամբուն վրայ գտնուող այն բոլոր աւերակները զորս քաղաքին ու մրակոծումը յառաջ բերած է:

Լի Հունկ Ջանկ խնդրած է օտար դեսպաններէն մինչեւ օգոս. 15 հեռացնել իրենց զօրքերը տաճարներէն և պալատներէն: Գեսպանները հաճութիւն տուեր են և պէտք եղածը յայտարարեցին իրենց հրամանատարներուն:

— Սէուէն կը հեռագրեն թէ՛ Քօրէյի մէջ առաջ եկած բոլոր դժուարութիւնները հարթուեց և երկիրը իր բնական հանդարտ վիճակը վերստացեր է: Զարոնացիներուն թիւը շարունակաբար կաճի Քօրէյի մէջ: Պրանսացիք ալ մեծ գործունէութիւն ցոյց կուտան:

Ճարտնցիք իրենց գիրքերը կը պահեն և արթնութեամբ կը հրկեն ուսական քաղաքականութեան վրայ: Ռուսիա հաշտարար յիւրք մը կը շանայ ունենալ ձալոնի հանդէպ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Կ. Շ., Վառնա. — Ձեր գրութիւնը շատ ուշ ստանալուն ստիպուեցանք յայտարարել յետաձգել:

— Կնքապահ, Պուրկազ. — Ձեր հերքումը յայտարարութեամբ կերեւայ:

ОТГОВОРНИКЪ:
Д-ръ М.Х.ЖРДИЧЪ ВАРГАНЪ
Печ. Взаимность. — Варна.